# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ԱՍՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## «ՀԱՅՈՑ ՏԻԵԶԵՐՔԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ»

Վերջերս հայ մշակույթի մատենաշարը հարստացավ եւս մի կարեւոր հրապարակությամբ՝ Հրայր Բազեի ( Խաչերյան) աշխարհի հայ եկեղեցիները պատկերող **«ՄԵԿ ԱԶԳ ՄԵԿ ԵԿԵՂԵՑԻ», 2013 թ.** լուսանկարչական ալբոմը: Այն Քրիստոսի խաչելության պատկերի առաջ կատարված ուխտի արդյունք է, որտեղ զետեղված ամեն մի եկեղեցի նյութական կառույց է եւ հոգեւորպ բովանդակություն ունի: Իրոք որ՝ « Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս..., (որ) ես աչքս գոց կտեսնեմ, ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր հիսուսով մանկադեմ, իր սեղանեն միացող քուլա-քուլա խունկերով...» : Փաստորեն, հայկական եկեղեցին եւ դպրոցը ազգային ինքնության խորհրդանիշներն են: Դրանց պահպանությունը եւ շենացումը ազգային գիտակցության գոյությունն է, իսկ ուսումնասիրությունը հարատեւություն կամ հայապահպանություն: Տվյալ գործը հայկական իրականության համար հույժ կարեւոր է, որում իրենց լուման ունեն գիտության եւ արվեստի բոլոր բնագավառները, այդ թվում՝ ներկայացված պատկերազարդ ալբոմը: Այն հայ լուսանկարչի ուխտագնացությունն է դեպի հին ու նոր, մեծ ու փոքր, ավերակ ու շեն հայոց սրբավայրերը: Ալբոմի աշախրհագրությունը ներկայիս քաղաքական սահմաններով է: Ճանապարհորդությունը սկսելով Արցախից, անցնում է դեպի՝ Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա եւ Վրաստան, Միջին Արեւելք, Աֆրիկա, Եվրոպա, Հեռավոր Արեւելք, Հարավային եւ Հյուսիսային Ամերիկաներ: Աշխատությունը գիտական հնդիրներ չունի, այլ այն մտահղացված է որպես լուսանկարներից կազմված՝ ինքնաբուխ աղոթքների շարք եւ գողտրիկ մանրապատումներ: Ճիշտ է ասվել՝ հայ եկեղեցին սահմանափակ ուրվագծերի մեջ ասպծո անհունության տեղավորումն է: Ալբոմի յուրաքանչյուր նկարի նպատակը այս արեղծվածի պատկերումն է, միաժամանակ լինելով՝ զմայլանք, նվիրում, գեղեցիկի՝ հոգինվածքային եւ իմաստասիրական որոնում:

Հրայր Բազեն որպես հայ լուսանկարիչ հասակ է առել սփյուռքահայ իրականության մեջ: Նրա համար հայկական եկեղեցին ազգային հարստություն է, անկախ իր համայնքային պատկանելությունից: Միեւնույնն է՝ բոլոր եկեղեցիների ենթատեքստում հայերեն պատարգ է հնչում, հայ մանուկների անմեղ ժպիտն է ծաղկում, տատիկների եւ պապիկների շինիչ աղոթքն է ծորում: Հեղինակի համար եկեղեցին յուրաքանչյուր հայի տունն է աշխարհի չորս ծագերին: Ինչպես Հրայր Բազեն է նշում՝ «Հայրս կը յաճախէ հայ Աւետարանական եկեղեցի. մայրս, Հայ կաթողիկէ եկեղեցի, ես ու կինս ամուսնացանք

Հայոց Առաքելական եկեղեցւոյ մէջ, ահա ձեզի գիրքս՝ Մէկ Ազգ Մէկ Եկեղեցի»: Փաստորեն, Ալբոմի մեթոդը աշխարհագրական նշված բաժանումով , հայկական եկեղեցիների խառը փունջ է, որտեղ ամեն մի հուշարձանին ընկերակցում է՝ անգլերեն, հայերեն եւ ֆրանսերեն տեղեկություններ:

Հայկական ճարտարապետությունը, հայ մշակույթի ուսումնասիրության ուրույն բնագավառ է: Որքան էլ սրբավայրերի հետ նախընտրելի է ընդգրկել նաեւ աշխարհիկ շենքերը, այնուամենայնիվ, ժամանակի մասին ամենաարտահայտիչ պատկերացումը տալիս են եկեղեցիները: Նրանք նվիրված լինելով Աստծուն, լավագույնս արտացոլում են ժամանակի ստեղծագործական ճիգերը եւ ազգային իրականությունից բարձրանում են դեպի միջազգային արժեքների համատեքստ: Բազմաթիվ են հայկական համընդհանուր ճարտարապետության նվիրված ուսումնասիրությունները: Հիմնադրված լինելով Թորոս Թորամանյանի կողմից, հետագայում, հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը խորացվեց մի շարք երախտավորների ջանքերով եւ՝ միայն 20-րդ դարի երկրորդ կեսին հնարավոր եղավ նրա թերի ամբողջությամբ շարադրումը: Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը հանրագիտարանային բովանդակության հասցվեց Պաոլո Կունեոի եւ հեղինակային կազմի հրատարակած §Architettura Armena” ( Roma, 1989) կոթողային երկհատորով եւ կատարելագործվեց շնորհիվ մի շարք հրատարակությունների, ինչպես՝ Ժան Միշել Թիերիի աշխատությունները, Պրոֆեսոր Վազգեն Բարսեղյանի ղեկավարությամբ հրատարակված “Armenian Architecture” Microform collection-Á ( T.NY, 1984-1987 թթ.), եւ հատկապես Վարազդատ Հարությունյանի «Հայ ճարտարապետության պատմության» դասագիրքի (Երեւան,1985 եւ 1992 թ.): Այնուամենայնիվ, 21-րդ դարի սկզբին դեռեւս նպատակային է մնում Կենտրոնական եւ Կիլիկյան Հայաստանների հետ՝ հայկական եկեղեցաշինության լրացումը նաեւ գաղթօջախների ընդգրկողությամբ, որ իր առաջին օրինակներից մեկը ունեցավ հանձինս սույն՝«Մեկ ազգ մեկ մշակույթ» աշխատության: Գրքի առաջին եկեղեցին նկարվել է 1992 թ. սեպտեմբերի 7-ին, Ղարաբաղի Մարտունի քաղաքի մերձակա Ճարտար գյուղի մոտ գտնվող միջնադարյան Եղիշե կույս Անապատում: Այնուհետեւ, ինչպես հեղինակն է գրում՝ «20 տարիներէ աւելի ...նկարեցի՝ նաւակներու վրայէն, ոտքի վրայ, ծառերու վրայ մագլցած, եւ մինչեւ իսկ թռչունի տեսանկիւնէն, շնորհիւ ուղղաթիռներու»: Փաստորեն, «Մեկ ազգ մեկ եկեղեցի» ալբոմը Հրայր Բազեի կողմից 1997 -2012 թթ. հրատարակված 10 ալբոմների լրացված ծաղկաքաղն է, որ բաղկացած է նախաբանից եւ հաջորդական 9 նկարազարդ մասերից, որոնք միասնաբար համալրված են 25 X 35 փորմատի 360 էջերում:

Անվանի կինո ռեժիսոր Ատոմ Էգոյանը գրքի առաջաբանում, այս տարվա հունվարի 8-ին գրել է՝ «Քսան տարի երբ Բազէն իր խօսքը յարգած է, եւ բարեբախտաբար շատ առողջ է, ան ոչ միայն քառասունէ աւելի երկիրներ այցելեց որպէսզի մեր զանձերը նկարէ, այլ նաեւ տաս գիրքեր հրատարակած է, մերկի պատկերներէն մինչեւ գեղագրական զարդարուեստ, անոր գործը վկայութիւն մըն է մարդկային ոգիի գերազանց դիմադրողականութեան, հայութեան նման ցիրուցան ժողովուրդի մը համար, այս նշանակալի գիրքը մէկ մարդու տեսլականին եւ ուժգին հետաքրքրութեան ընդմէջէն նշանակալի նո-

ւէր մըն է հաւաքական ոգիին: Ասիկա կոթողային իրագործում մըն է: Արդիական միջոցներու կարողութեամբ, հին ժողովուրդ մը անգամ մը եւս կը միանայ իր հաւաքական հավատքի շուրջ»: Ճանաչված գիտնական եւ մտավորական Գյոդ Արմեն Մութաֆյանի ներածականը ընթերցողին ծանոթացնում է թափառող մարաքաղաքների երկրի պատմաաշխարհագրական ուրվագծերին: Ինչպես ամրագրվել է` Հայաստանի տարածքային առաջին բաժանումը կատարվել հռոմեական եւ պարսկական մրցակցության բովում, 4-րդ դարի ավարտին: Հայկական աշխարհագրության համար սովորական են «Կենտրոնական Հայաստան», «Մեծ Հայք», «Փոքր Հայք», «Արցախ աշխարհ», «Հայկական Կիլիկյան թագավորություն» արտահայտությունները: Հայոց պատմության համար ընդունված օրինաչափություններ են` բազմապասնյակ գաղթավայրերի հիմնադրումն ու լավատեսությամբ լի վերապրելու արեղծվածը եւ այլն:

Հրայր Բազեի նկարազարդ ալբոմի մեկնաբանությունները գրված է պարզ երկխոսությամբ, որ հիշեցնում է հին տեղագրողներինկարագրությունները եւ ճանապարհորդական հետազոտությունների սուր դիտողականությունը: Այդ սառումով էլ կատարված այցելությունները այստ կներկայացվեն որպես` ճանապարհորդական 9 «գիրք»-եր:

«Առաջին գիրքը» փնջավորում է Արցախի սրբավայրերը: Ընտրված 16 հուշարձանների լուսանկարների ամեն մեկը մի խորհուրդ ունի: Եղիշակուսը,Հադրուտի Սբ.Ստեփանոսը, Բռի Եղցին, Հակոբավանքը, Դադիվանքը պատերի շարվածքում հագուցված խաչքարերով եւ հայատառ արձանագրություններով պարեգրություններ են: Արեւամուտին նկարված Ամարասի ուրվագիծը աղոթք է: Մոխրենիսի Օխտը Դռնեն, Կտչավանքը, Կատարովանքը անտաշ քարերով իրականացծված պատի տեկտոնիկայի ըմբռնման կատարելություններ են: Ծիծեռնավանքի, Ամարասի, Դադիվանքի, Երից Մանկանց համալիրի` թռչնի աչքի բարձրությամբ կատարված պատկերումները հայ վանական կյանքին ձոնված բանաստեղծություններ են: Իրոք որ այսօրվա շքեղ Ղազանչեցոց եկեղեցին, Քրիստոսի խաչելության փորձն անցած պատմություն ունի: Վանքասարի գողտրիկ եկեղեցին Արցախյան Տիգրանակերտի անտիկ պատմության քրիստոնեական հարատեւումն է: Գանձասարի նրբագեղ քանդակները շենքի հետ նույն օրգանական կապի մեջ են, ինչ` վանքային համալիրը իր շրջակա ռելիեֆի: Եղիշե Առաքյալի վանքը իր 7 եկեղեցիներով ձորի եզրին կանգնած աղոթողների շարք է:

«Երկրորդ գիրքը» ընդգրկում է ներկայիս Հայաստանի տարածքը: Բնականաբար պատկերներով ներկայացված 45 սրբավայրերի առաջնեկը միշտ հին ու նոր Մայր Աթոռ Ս.Էջմիածինն է: Նրան հաջորդում են` Սբ.Հռիփսիմեն, Շողակաթը, Գայանեն, Զվարթնոցը եւ Երեւանի Սբ.Գրիգոր Մայր տաճարը: Իր տեսակի յուրատիպ տաճար է նույնպես 1915 թ. նահատակների հիշատակին նվիրված Եղեռնի համալիրը: Խոր Վիրապը, Գեղարդավանքը, Գառնիի տաճարը իր հարակից եկեղեցու հետ, Սեւանավանքն ու Վազգենյան դպրանոցը, Հայրավանքը, Հաղբատը, Սանահինը, Օձունը, Հաղարծինը, Գոշավանքը, Կեչառիսը, Խորակերտը, Նորավանքը, Արենին, Մարմաշենը, Մաստարան, Օհանավանքը, Սաղմոսավանքը, Տեղերի վանքը, Արագածի փեշերին եւ Քասախի

ձորում ծվարած Աշտարակ քաղաքի եկեղեցիները, Ամբերդն ու Եղվարդի Սբ.Աստվածածինը, Հառիճավանքը, Ջոբանողու բարձունքից նկարված Տաթեւի վանքի պեղանքը եւ այլք նկարներում մեկնաբանված են փոխառության սկզբունքով: Էջմիածինի Մայր տաճարը վանական բակի կենտրոնում զետեղված անսասան պապան է: Եղեռնի համալիրը Արարատի առաջ փռված բազին է: Նկարված բոլոր եկեղեցիներն էլ բնության մի մասնիկ են, եւ այլն:

Ամեն մի նկար մտորման պահ է եւ պատմողական մի արահետ: «Երրորդ գիրք»-ը հայկական փոխառնչություններով հարուստ լուսապատկերների շարք է , որ ընդգրկում է այժմյան Թուրքիայի եւ Վրաստանի տարածքները: Հրայր Բազեի Կ.Պոլսի նկարները, թեկուզ թերի ամբողջությամբ ներկայացող բովանդակությամբ, գեղարվեստական հագեցվածություն ունեն: Ընդգրկված Երեք պասնյակ եկեղեցիներից լուսանկարչական վարպետությամբ առանձնապես ուշագրավ են Բեշիկթաշի սբ Աստվածածին եկեղեցու խորանը, Սամաթիայի Սբ. Գեւորգը, Կուզկուշնկի Սբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեղցու առաստաղը, Պոլսի Ազգային հիվանդանոցի Սբ.Փրկիչ մատուռի, Քադըկեոյի Սբ. Թագավոր եւ Բեյօղլուի Սբ. Երրորդություն եկեղեցիների ներսույթները: Իրենց նորույթով գրավիչ են՝ Դիարբեկիրի Սբ Կիրակոսի անծայրածիր ներքին տեսքը, Վանա լճի հայաբույր խորքի վրա ուրվագծվող վերջերս վերականգնված Աղթամար Սբ. Խաչը, Արծկեի Սքանչելագործ եկեղեցու համայնապատկերը, Դիվարբույնի, Գանձակի Սբ. Թովմայի, Փալուի եկեղեցիների աղերսող ավերակները, Վարագավանքի Սբ. Գեւորգ գավթի եւ Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու ներքին ընդգրկուն ռակուրսները, լեռների առաջ փռված Անի քաղաքի ավերակների պանորաման, Հոռոմոսի վանքն ու արփաչայը եւ այլն, եւ այլն: Վրաստանի մասը ըստ էության շարունակելով ժառանգության մասին պատմող հեքիաթը, բովանդակությամբ նկատելի զիջում է Թուրքիայի տարածքի պատկերներին:

Չորրորդ գիրքը ճանապարհորդություն է դեպի Միջին արեւելքի հայաշունչ զաղթավայրերը: Հնարավոր չէ հիացմունքը զսպել Երուսաղեմի Սբ. Հակոբա վանքի մայր եկեղեցու եւ Հարության տաճարի հոգեպարար պատկերները դիտելիս, դրանք գրքի նման կարելի է երկար ընթերցել: Իրոք որ պատմությունն է հոսում նկարների կիսախավարի վրա նկարվող ճարտարապետական մանրամասներում: Նույնը պետք է կրկնել Սոհրուլի տաճարի աղյուսակերտ պատերի, ձորձորի եկեղեցու պանորամայի, Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի, Սբ. Հովսեփ, Սբ. Բեթլեհեմ եկեղեցիների անկրկնելի ներսույթների կապակցությամբ: Բեյրութից, Տրիպոլիից, Անճարից ներկայացվող 2 տասնյակ լիբանանյան եկեղեցիները հետաքրքիր ծավալապարածական բազմազանություն են դրսեւորում: Մայրիների եւ արմավենիների հարակցությամբ նիրհող եկեղեցիների պատկերներում երաժշտականություն կա: Անթլիասի տաճարները հերոսական մասշտաբով հետաքրքիր խորխտությամբ ռոմանտիզմ են: Հայկական տաճարների հարուստ ծավալապարածական ձեւերն են արտահայտում՝ Տրիպոլիի եւ Աշրաֆիայի Սբ.Հոգեգալուստ եկեղեցիները, նույն Աշրաֆիայի Սբ. Հակոբը, Բուրջ Համուդի Սբ. Փրկիչը: Կաթողիկե համայնքի Սբ Եղիայի լուսանկարը լուսավոր շարական է: Խիտ կառուցապատման մեջ ծվարած Բեյրութի Սբ. Գեւորգը որդիները գիրկն առած մոր պատկերի կերպարն ունի:

Բուրջ Համուդի Սբ. Խաչ եկեղեցու պարածությունը լցված է հայ մանուկների հուսադրող ժպիտով: Անսանելի համաչափական կատարելություն եւ պերճանք կա Անճարի Սբ. Պողոս եկեղեցու պատկերներում: 2 տասնյակ կազմով, աննախադեպ ներկայացվել են Սիրիայի՝ Հալեպ, Դամասկոս, Հասիրչե, Քամիշլի, Դեր-Զոր, Մարգադե, Քեսապ, Յակուբիե, Տել Աբիադ, Ռաս-ուլ-Այն քաղաքների եկեղեցիների նկարները:Դրանցից, Դեր-Զորի 1915 թ. մեմորիալը Երկիարկ դամբարան եկեղեցու մտահղացումով՝ հիշատակի ու խոր սուգի պատկերման լավագույն օրինակ է: Մեծամասշտաբ նվագախմբի պոռթկումն ունեն Հալեպի Սբ. Երրորդություն եւ Սբ. Աստվածածին եկեղեցիների ինտերիերները: Ամման, Քուվեյթ, Շարջա, Կիպրոս , Կերկուկ, Մոսուլ եւ այլ քաղաքներում եղած հայկական տաճարներից յուրաքանչյուրը հարատեւման խորհրդանիշներ են: Բաղդադում եղած չորս եկեղեցիներից Սբ. Գրիգոր Լուսավորչի պատկերը Արմավենու ամրությամբ մտահղացված միջագետքյան հինավուրց ակունք ունի:

Ալբոմի հինգերրորդ գիրքը Արեւելքի ճանապարհները խորացնում է դեպի Աֆրիկյան մայրացամաք ընդգրկելով՝ Սուդանը, Եթովպիան, Եգիպտոսը: Ադիս Աբեբայի Սբ. Գեւորգի լուսանկարներում ծնծղայի ձայնային օրինաչափությամբ պատկերված գույների եւ ծավալների ներդաշնակություն կա: Կահիրեի եւ Ալեքսանդրիայի մի քանի եկեղեցիների պատկերներով խորհրդանշվում է երբեմնի ընդարձակ ցաղթավայրը: Դրանցից մեկն է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր անկրկնելի խորանով : Սպիտակ վանքը Միջին եգիպտոսի պարածաքում կառուցված, հայ-եգիպտական, հայ-արաբական ճարտարապետական փոխառնչությունների հանրագիտարան է: Կարելի է հասկանալ նկարի սիմետրիկ, հարթ ճակատային պատկերումը, որտեղ ամեն լույս ստվեր հարթ ճակատի վրա նկարված պատմական մի դրվագ է:

Վեցերորդ գիրքը եվրոպական մշակույթների հորձանուտում հայկական հին ու նոր եկեղեցիների որոնումն է: Հայերս, որքան էլ վերածննդի , բարոկկոյի շրջանի ճարտարապետական հարստությունը Հայաստանում չունեցանք , այնուամենայնիվ դրանց Կ. Պոլսում եւ եվրոպական քաղաքներում կառուցված մի քանի օրինակներն անգամ յուրահատուկ երանգ են հայկական եկեղեցական ժառանգության մեջ: Այս առումով մեծ հետաքրքրություն են առաջացնում՝ Հռոմի Սան Նիկոլա դա Տոլենտինո հայ կաթողիկե եկեղեցու առաստաղի պատկերը, Վիեննայի հայ մխիթարյան միաբանության տաճարի վերսլաց տրիֆորումը, բարդ քաղաքաշինական դիրքում ներդաշնակորեն տեղադրված Վիեննայի սբ Հռիփսիմեն, Բրյուսելի Սբ. Մարիամ Մագդաղենացի եկեղեցին իր ավանդական ձեւերով բայց ժամանակակից շարվածքով, գույն քանդակայի գտնված միջավայրային շեշտ է: Նորմանդյան եւ հայկական առնչությունների ավելի լավ պատկերում չէր կարող լինել քան Հաղբատի զանգակատան եւ խաչաձեւ հորինքով մտահղացված Լոնդոնի Սբ. Սարգիս եկեղեցին: Նույնը պետք է ասել Ֆրանսիայի հայկական համայնքի մի շարք եկեղեցիների կապակցությամբ, որոնցից հատկապես ուշագրավ են ծավալային արտահայտիչ դիրքերով նկարված Փարիզի եւ Վալանսի, Մարսելի, Արնուվիլի, Լիոնի, Իսի Լե Մուլինոյի հայկական եկեղեցիները: Մի ամբողջական խմբերգի խանդաղատանք կա Մարսելի Թարգմանչաց եկեղեցու համայնապատկերում: Նույն

ոգով խմբային աղոթքի պահն է հավերժացած Քյոլնի Սբ. Սահակ և Սբ. Մեսրոպ եկեղեցու լայնաֆորմատ պատկերում: Անհավատալի մասշտաբային և ծավալայնության զգացմունքով նկարված է Աթենքի Սբ. Գրիգոր եկեղեցին: Այն լույսի և ստվերի դրվագներով համադրված ճառագայթող ամբողջություն է: Ի տարբերություն նախորդի Աթենքի Սբ. Կարապետի ներսույթը հոգեպարար պարածականությամբ է: Ջերմություն են սփռում Վենետիկի Սբ. Ղազար վանքի եկեղեցու ներսույթների պատկերները: Աստվածային արձագանքող ձայնի պատկերն է արտացոլված Վենետիկի Սբ. Խաչ հայ Կաթոլիկե եկեղեցու նկարներում: Նույն ոգին է թևածում Նապոլիի սբ. Գրիգոր Լուսավորիչ և Միլանոյի քառասուն Սանկանց եկեղեցիների լուսանկարներում: Աստվածայինի սիրով և անսելի գեղեցիկ համաչափությամբ են նկարված Ժնևի Սբ. Սարգիս եկեղեցու նկարները: Բուխարեստի Հրեշտակապետաց և Սբ Աստվածածին եկեղեցիների պատկերները՝ սահմանափակ երկրաչափականության մեջ անսահմանության ոգի ունեն: Անասելի ստեղծվործական թռիչք կա Յալթայի, Լվովի եկեղեցիների նկարներում, մինչդեռ Օդեսայի եկեղեցին հյուրընկալ երանգավորում ունի: Չգիտես ինչու, հայ եկեղեցաշինության աշխուժ ուկրաինական և ռուսական քաղաքավայրից օրինակները սակավ են, դրանք բազմապատկյակ լինելով ընդամենը ներկայացվել են մի քանիսով՝ Ուկրաինայից 10, իսկ Ռուսաստանից՝ 4 եկեղեցիներ : Փաստորեն, Հրայր Բազեն իր նկարներում կարողանում է արտահայտել այն յուրահատուկը, որ բնորոշ է ամեն մի եկեղեցուն: Սա նուրբ ընկալման և չափողականության ճշգրիտ արտացոլման արհեստավարժություն է:

Յոթերորդ գիրքը ճանապարհորդություն է դեպի Հեռավոր Արևելք և Ավստրալիա: Որքան էլ մի քանիսն են տարածքում նկարված մեծ ու փոքր եկեղեցիները, այնուամենայնիվ դրանք ներկայացված են ամփոփական և ծավալի ընկալման վարպետությամբ: Թվում է բովանդակային ամեն ինչ հստակ ասված է կամարի մեջից նայվող Մադրասի եկեղեցու պատկերում: Այն բազմազան ծավալների համատեքստում հայկական փոքր դրվագների շեշտադրումով ամբողջական կուռ համակարգ է: Հայկական եկեղեցիների Հեռավոր արևելյան հուշարձանները 18-19-րդ դարերից եկող անցյալ ունեն: Գրքում պատկապես ընդգրկվել ենԴ-հակկայի Սբ. Հարությունը (Բանգլադեշ), Յանգոնի Սբ. Հովհաննես Մկրտիչը ( Բուրմա), Սինգապուրի Սբ. Գրիգոր Լուսավորիչը, Հնդկաստանից՝ Բոմբայի Սբ. Պետրոսը, Կալկաթայի Սբ. Նազարեթ և Սբ. Գրիգոր Լուսավորիչը, Չինսուրայի Սբ.Հովհաննես Մկրտիչ և Սայդաբադի Սբ.Աստվածածինը: Ավստրալիայի եկեղեցիների պատկերներից կարևոր է նշել՝ Սիդնեի Սբ. Հարության և ավետարանական եկեղեցիները, Մելբուրնի Սբ. Աստվածածինը:

«Մեկ ազգ մեկ եկեղեցի» աշխատանքի ութերորդ գիրքը անցնում է Հարավային Ամերիկայի ինքնատիպ մշակույթներով: Վենեսուելյան, Ուրուգուայը, Բրազիլիան, Արգենտինան՝ հայկական եկեղեցիներով մեկը մյուսից ինքնատիպ են: Դրանցում ընդհանուրը անխտիր հայեցիությունն է: Ուշագրավ դիրքերից է նկարված Բուենոս Այրեսի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Հրայր Բազեին հաջողվել է հայկական գմբեթները պատկերել կոլոնիալիստական համատեքստում: Կարակասի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հայկական պաճարային փիպերի սինթեզ է: Մոնտեվիդեոյի Սբ. Ներսես

Շնորհալի եւ հայ կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցիները բնութագրական են իրենց հարուստ ինտերիերներով: Սան Պաուլոյի Սբ. Գեորգը, որքան էլ շեշտված հայկական կերպար ունի, նույնքան կոլոնիալիստական է:

Իններորդ գիրք փնջավորում է ԱՄՆ-ի եւ Կանադայի հայկական եկեղեցիները: Դրանք ուշագրավ են միջավայրային կազմակերպվածությամբ, ժամանակակից տեխնոլոգիաների հարստությամբ եւ գեղարվեստական հարուստ լուծումներով: Այո, Հյուսիսային Ամերիկան հայկական արդի եկեղեցաշինության դպրոց է: Աշխատությունում ներկայացված 56 եկեղեցիները ոճականորեն բազմազան են: Հեղինակին հաջողվել է լուսանկարներում ցայտուն դարձնել ամեն մի եկեղեցու ծավալատարածական առանձնահատկությունը: Նշված եկեղեցիներից շուրջ երկու տասնյակը օտարաոճ են, դրանցից լուսանկարչականորեն հետաքրքիր են՝ Նյու Ջըրսիի Սբ. Թովմասը եւ Ֆիլադելֆիայի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Հայկական ժառանգորդական եւ միաժամանակ արմատական էկլեկտիկ համադրությամբ են՝ Նյու Յորքի Սբ. Վարդանն ու Սբ.Սարգիսը, Բելմոնի Սբ. Խաչը, Չիկագոյի Ամենայն Սրբոց եկեղեցին եւ Ֆրեզնոյի Սբ. Երրորդությունը: Տարածքի եկեղեցական ճարտարապետության դպրոց լինելու հանգամանքը առանձնապես պայմանավորված է նորարական ճարտարապետությամբ եկեղեցիների օրինակներում: Դրանք հայկական ժառանգությունը արտահայտում են արդի ճարտարապետության զարգացման տենդենցներով, ինչպես օրինակ՝ Տենաֆլեի եկեղեցին, Ֆրեզնոյի Սբ. Պողոսն ու Սբ.Պետրոսը, Սան Ֆրանսիսկոյի Սբ.Գրիգոր Լուսավորիչը, Քալիֆորնիայի Բըրբենկի՝ Էջմիածնական, Կիլիկյան Աթոռի, հայ կաթոլիկ համայնքի առջնորդանիստ եկեղեցիները, Վանկուվերի Սբ.Վարդանանց եւ Թորոնթոյի ավետարանական, Մոնրիալի հայ կաթողիկե եկեղեցիները եւ այլն:

Հրայր Բազեի աշխատությունը բովանդակությամբ նոր փուլ է հայկական եկեղեցաշինության ուսումնասիրության բնագավառում, որ աննախադեպ կերպով ներգավում է նաեւ սփյուռքահայ եկեղեցաշինական իրականությունը: Բնականաբար, ներկայացված աշխատությունը լուսանկարչական արվեստի ստեղծագործաբար կատարված փունջ է: Հեղինակի նկարները ներդաշնակությամբ ստեղծված խորհրդապաշտ ամբողջություններ են: Խորքը բնությունն է, իսկ անհատականը հենց ինքը եկեղեցին: Վարպետությունը դրանում է, որ նրանք համադրված լինելով դոմինանտի, հորինվածքի կենտրոնի եւ տարածական առանցքների միասնականությամբ՝բնության եւ ծաղկի համացուլածքն ունեն: Նկարների տեսանկյան, հեռանկարային դիրքի ընտրությունները կատարվել են մտածմին: Պատկերների ուրվագծային կերտվածքը շարունակականության սկզբունքով է: Ըստ ընտրված տեսանկյունի շենքի եւ բնության՝պլաստիկային, լույս ու ստվերի, գույնի, ֆակտուրային լուծումները կոնտրաստային պայմանավորվածության մեջ են:

Մաղթենք հեղինակին քաջառողջություն եւ մշտական կորով շարունակելու իր հայասիրական արշավը, քանզի՝ «Եկեղեցին հայկական մէջ մի քարին տակ գետնի, դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»:

ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ
ճարտարապետության դոկտոր